

«Զբոսաշրջություն» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր

Մասնագիտության նկարագիրը

Համաշխարհային տնտեսության զարգացման պատմությունը և աշխարհի երկրների փորձը փաստում է, որ զբոսաշրջությունը կարող է հանդիսանալ սոցիալ-տնտեսական մի շարք հիմնախնդիրների լուծմանը նպաստող ոլորտ, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտագործելու ամբողջ աշխարհում ձևավորված և գործնականում գրեթե անսահմանափակ, շրջագայությունների նկատմամբ կայուն պահանջարկը, որը յուրաքանչյուր երկրի համար արտարժույթային եկամուտների մեծ ներհոսք է ապահովում:

Կրթական ծրագրի շրջանակներում ուսումնասիրվում է միջազգային զբոսաշրջությունը միջազգային տնտեսական կապերի համակարգում և դիտարկվում միջազգային զբոսաշրջության սոցիալ-տնտեսական և աշխարհագրական գործոնները համաշխարհայինացման պայմաններում՝ վերլուծելով զբոսաշրջային տարածաշրջանները և զբոսաշրջային հոսքերի հիմնական ուղղությունները: Կրթական ծրագիրը ներկայացնում է նաև հյուրընկալության և զբոսաշրջության ժամանակակից կառուցվածքը, հյուրանոցային գործունեության կազմակերպման առանձնահատկությունները և հյուրընկալության դերը միջոցառումների կազմակերպման գործընթացում՝ որպես զբոսաշրջային մրցունակության ապահովման առանցքային գործիք:

Աշխատանքի հնարավորությունները

Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրների և ՀՀ աշխատաշուկաներում ավելանում է զբոսաշրջության ոլորտի ընդհանուր հմտություններին լրջագույնս և լավագույնս տիրապետող անձանց պահանջարկը, որոնք միաժամանակ ունեն տնտեսության և բիզնեսի կազմակերպման և կառավարման իմացություն: Հենց հաշվի առնելով այս հանգամանքը՝ մեր օրերում զբոսաշրջության կառավարումը դասվում է աշխատաշուկայում ամենապահանջված մասնագիտությունների շարքին:

Զբոսաշրջության ոլորտի կառավարիչների պահանջարկը կայուն բարձր է պետական կառավարման և ՏԻՄ մարմիններում, որտեղ վերջիններս աշխատում են զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման ու իրականացման վրա: Երջանավարտների համար աշխատանքային հնարավորություններ են ընձեռում նաև զբոսաշրջային գործակալություններն ու օպերատորները, հյուրանոցները և հյուրանոցային տնտեսության այլ օբյեկտները, սննդի և զվարճալիքների ձեռնարկություն-

ները, զբոսաշրջիկներին սպասարկող տրանսպորտային ընկերությունները, ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններն ու միավորումները, ինչպես նաև միջազգային և այլ մասնագիտացված կազմակերպությունները՝ զբաղեցնելով մասնագիտական, միջին կամ բարձր օղակի պաշտոններ: